

ԺԷ. «Յառաջ քան զամս բազումս խորհուրդք անմխիթարք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով եւ աղաչելով զԲարձրեալն՝ շնորհել ինձ արու որդի, որպէս եւ նախնեացն¹ իմոց², որք յառաջ քան զիս էին ամուսնացեալք յաղագս որդեժնութեան: 2 Եւ արդ՝ վասն զի մատակարարումս հզաւրին առ իւրաքանչիւր ոք արդար է եւ ճանաչող առաւել քան եթէ զոր մէք իմանամք եւ խորհիմք. եւ էի ես ի մեծի³ հինգշաբաթոջն ի զատկի աղուհացիցն ի հսկման, հաղորդեալ ի ժամ երեկոյին պաշտաման՝ սրբոյ եւ մեղսաքաւիչ խորհրդոյ կենարարին⁴, ճաշակեալ այլ բնաւ աւելի ինչ ոչ՝ բայց հաց եւ ջուր եւ աղ, ըստ կանոնելոյ մեծի եւ սուրբ ժողովոյն երեք հարիւր ութ եւ տասանցն, որք ի Նիկիացւոց քաղաքին այսպէս կանոնագրեալ հաստատեցին, զորոց կանոնադրութիւն⁵ կնքեալ սուրբ Յոգին սահմանեաց: 3 Եւ կատարեալ կանոն յերկարման առաջին⁶ գործողայիցն⁷, եւ դասք պաշտաւնէիցն ընդ նստելն, ծանր նիրհամք, ի սաստկութենէ բազմաւրեայ տքնութեանցն՝ որպէս կիսամեռք եղեն. որոց զաւուրս քառասնորդացն⁸ ուժգին պահաւք եւ անդադար աղաւթիւք զցայգ եւ զցերեկ հանեալ էր. եւ մանաւանդ ի մեծի շաբաթուն առաւել եւս յաւելուածով զնոյնս աճեցուցանել փութային, ուշադրեալք ուրախալից վաստակով հասանել վարձուցն հատուցման: 4 Եւ լոյս ճրագացն եւ կանթեղացն բորբոքեալ տոչորէր. եւ ընթերցողն կամաւ յերկարէր զկարդացմունսն, յաղագս սակաւ մի առնլոյ ոգի եւ բաւելոյ պաշտաւնէիցն առաջարկութեան կանոնին. մնային եւ ժողովրդոցն բազմութեան ժողովելոյ ըստ սովորութեանն ի պաշտաւն գիշերոյն. քանզի յորդոր կամաւորութեամբն փափաքէր իւրաքանչիւր ոք, այր եւ կին առ հասարակ, ժամանել արթնութեամբ անձին փրկութեան: 5 Եւ ես նստի մերձ⁹ առ սեղանն Աստուծոյ ի սուրբ եկեղեցւոջն Վաղարշապատ քաղաքի¹⁰:

1 Ատ. որպէս նախն...

2 Ձ. չիք որպէս եւ նախնեացն իմոց

3 ՁԱտ. եւ ես ի մեծի

4 Ձ. կենարար

5 Ատ. կանոնագրութիւն

6 Ձ. առաջի

7 ԲԳտ. գործողայիցն

8 Ատ. քառասներորդացն ԲԳտ. քառասնորդացն

9 ՁԱտ. չիք մերձ

10 Ձ. զկնի Վաղարշապատ քաղաքի ունի որում վայ